Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԵՍՏ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Դերենիկ Դեմիրճյանի ծննդյան 90-ամյակի առթիվ)

Իրադարձությունները ծայր առան 1956 թվականի ամռանը, երբ «Պիոներ կանչ» թերթի խմբագիր Ժենյա Մադոյանը որոշեց առաջիկա համարներից մեկում հրատարակել հնարավորինս ծավալուն մի հատված Դերենիկ Դեմիրճյանի՝ առ այդօր անտիպ «Մեսրոպ Մաշտոց» պատմավեպից։ Ընդհանրապես բոլորս էլ գիտեինք, որ Դեմիրճյանն աշխատում է իր նոր պատմավեպի վրա, որն ունենալու էր վերոհիշյալ վերնագիրը, գիտեինք, որ աշխատում էր անդուլ ու անդադրում, չնայած առաջացած տարիքին, հաճախ լուսացնելով գիշերները, բայց գիտեինք նաև, որ Վարպետը չի սիրում հատվածներ ներկայացնել դեռ չհրատարակված ստեղծագործությունից, և ուրեմն, պետք էր լինելու համոզել նրան։ Մադոյանի առանձնասենյակում որոշվեց, որ Դեմիրճյանի մոտ կգնան թերթի գրական բաժնի վարիչ Հենրիկ Սևանը, որն ի մոտո ծանոթ էր նրան, նկարիչ Միհրան Սոսոյանը և վերջապես ես՝ թերթի ռճաբանս։ Ինչ-ինչ պատճառներով Միհրան Սոսոյանը դուրս եկավ մեր «պատվիրակության» կազմից և մենք երկուսով, Մադոյանի համապատասխան հրահանգավորումներն ստանալուց հետո, ճանապարհ ընկանք դեպի Աբովյան փողոցի վերնամասում գտնվող Վարպետի բնակարանը։

* * *

Դուռը բացեց ինքը՝ Դերենիկ Դեմիրճյանը, կարճահասակ, ճաղատ, խոհուն ու մտացի դեմքով մեր գրող-մտավորականը, որի պատկառազդու արտաքինը այսօր դեռ չեն մոռացել մեզանից շատերը։ Ողջագուրանքի մեր խոսքերին պատասխանեց մեկ-երկու կարճառոտ նախադասություններով և առաջնորդելով մեզ ճաշասենյակ, խնդրեց նստել։ Ինքն էլ նստեց մեր դիմաց և կրծքին խաչելով թևերն ու նայելով մեզ, հանդարտ սպասեց։

Հենրիկ Սևանը պարզեց մեր գալու նպատակը, և մինչ նա խոսում էր, Դեմիրճյանի դեմքի վրա սկսեցի նկատել աստիճանաբար հասունացող մերժումը։ Իսկ այն բանից հետո, երբ Սևանը հավելեց, որ ցանկալի կլինի մեզ տրամադրելիք հատվածը

քիչ թե շատ պատանեկան թեքում ունենա, որովհետև այդպիսին էր «Պիոներ կանչ» թերթի ուղղվածությունը, Դեմիրճյանը կտրուկ ընդհատեց նրան։

- Չէ, չէ ... Հենրիկ, չի լինի։ Ձեզ ոչինչ տալ չեմ կարող։

Երևի զգալով, որ մերժումը շատ խիստ էր ու կտրուկ, Դեմիրճյանը քիչ լռելուց հետո շարունակեց, արդեն ավելի հանդարտ տոնով.

- Շատ բարդ վեպ է «Մեսրոպ Մաշտոցը», բարդ՝ կերպարների տեսակետից, կառուցվածքի իմաստով։ Ձեր թերթի պրոֆիլի, – նա տարածեց ձեռքերը, – ես ինչ գտնեմ։ Այդպիսի մանկա-պատանեկան հատվածներ իմ վեպում չկան։ Չէ, տղաներ, ոչինչ տալ չեմ կարող։

Ծանր լռություն տիրեց։

- Իսկ վեպի որ մասն է գրված, Վարպետ, – ցանկանալով ցրել ծանր լռությունը, զգույշ հարցրեցի ես։

Դեմիրճյանն ինձ նայեց մի հայացքով, որը մոտավորապես նշանակում էր. «Այդ ինչ միամիտ հարց ես տալիս»։

- Թող հայտնի լինի ձեզ սիրելի երիտասարդ, – մի տեսակ հանդիսավոր սկսեց նա, – որ քիչ թե շատ ծավալուն գործ ստեղծող և ոչ մի գրող այդ հարցին չի կարող պատասխանել։ Ես՝ առավել ևս, որովհետև հատվածներ կան, որոնք արդեն գրված-պատրաստ են, մի քանի բաներ էլ կան, որոնք պատրաստ են, բայց դեռ այստեղ են, – Դեմիրճյանը ցուցամատով խփեց գլխին, - իսկ շատ ավելի բաներ էլ կան, որոնք դեռ նոր պետք է հասունանան և որոնց մասին մտածում եմ ու մտածում։ - Նա մի պահ լռեց, ապա դարձավ երկուսիս, – Դուք կարծում եք, որ Դեմիրճյանը թուղթը դնում է առջևը, ճակատին գրում «Մեսրոպ Մաշտոց. պատմական վեպ, գիրք առաջին, գլուխ առաջին» ու սկսում է շարել տառերը, մինչև որ հասնում է «Վերջ» բառին, հա՞։

- Այդպես չենք կարծում, Վարպետ, – խոսեց Սևանը, – բայց չե՞ք կարող ասել, թե վեպի մոտավորապես որ մասն է գրված։

Պատասխանը հնչեց շատ որոշակի։

- Ոչ, չեմ կարող։ Այդ հարցը ինձ չի էլ հետաքրքրում։ Ես վեպ եմ գրում Մեսրոպ Մաշտոցի կամ հայերեն գրերի գյուտի մասին, իսկ թե այն ինչքան կլինի, կամ երբ կվերջացնեմ, դրա մասին ես չեմ մտածում, – Վարպետը մի պահ լռեց, ապա կտրուկ շուռ եկավ դեպի ինձ, – Դու ի՞նչ ես կարծում, Մեսրոպ Մաշտոցն ինչո՞ւ գրերի գյուտն արեց։

Հարցն այնքան անսպասելի էր, որ հարկավոր եղավ մի որոշ ժամանակ, որպեսզի կարողանայի կենտրոնանալ։ Մի պահ մտածեցի կատակել, բայց նկատելով, որ Դեմիրճյանն իր զննող հայացքը երեսիս հառած, շատ լուրջ ու կենտրոնացած սպասում է, սկսեցի.

- Նախ և առաջ այն պատճառով, որ Հայաստանը բաժանված էր Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև։ Այդ երկու ազգերն էլ ունեին իրենց լեզուն՝ բանավոր և գրավոր։ Հայերն էլ ունեին իրենց լեզուն, բայց տառ չունեին այդ լեզուն գրի առնելու համար...

Դեմիրճյանը բազմանշանակալից բարձրացրեց ցուցամատը։

- Իսկ հասկանո՞ւմ ես, թե դա ինչ է նշանակում, – ակնհայտորեն աշխուժացած, ինձ ընդհատեց նա, – դա նշանակում է հետևյալը. պատկերացրեք Հայաստան երկրի այն մասը, որը գտնվում է Բյուզանդիայի տնօրինության ներքո։ Հայ մայրը, իր փոքրիկ Առնակի ձեռքից բռնած, նրան տանում է հայ քահանայի մոտ՝ կրթության տալու։ «Ես քո խայտակն մանուկին իր մայրենին սովորեցնել չեմ կարող, – պիտի պատասխաներ քահանան, – որովհետև մեր մայրենին տառ չունի։ Այն ոչ կարելի է ի գիր արկանել և ոչ էլ որևէ մեկին ուսուցանել»։ - Դեմիրճյանը դարձյալ բազմանշանակալից բարձրացրեց ցուցամատը, – Իսկ կողքին հունական դպրոցներն են, իրենց գիր-գրականությամբ, իրենց գրական հսկաներով՝ հոմերոսներով, հեսիոդոսներով, թեոգնիդեսներով։ Եվ հայ մայրը, բնական է, իր Առնակին պետք է տաներ հունական դպրոց։ Նույնն էր դրությունը Հայաստանի մյուս՝ պարսկական հատվածում։ Այստեղ էլ հայ մայրն իր փոքրիկ Վաշտակին ստիպված էր լինելու տանել պարսկական դպրոց։ Հիմա հասկանո՞ւմ եք, թե ինչպիսի մեծ աղետ էր կախված հայ ժողովրդի գլխին։

Մի պահ լռություն տիրեց։

- Վարպետ, հենց այդ հատվածն էլ տվեք՝ տանենք հրատարակենք, – լռությունը խզեց Հենրիկ Սևանը։ - Ձեր պատմելուց երևաց, որ այդքանն արդեն գրված-պատրաստ է։

Դեմիրճյանը մի պահ անհանգստացած նայեց մեզ և շփոթված սկսեց թարթել աչքերը այն երեխայի նման, որ հանկարծ բռնվում է խոսքի մեջ։

- Չէ... այդ հատվածը պատրաստ չէ ..., այսինքն՝ դեռ գրված չէ ... ես ուղղակի բարձրաձայն շարադրում էի ասելիքս։ Եթե տամ, ձեզ ուրիշ բան կտամ ... տեսնենք։

- Լսիր, կարծես թե վերջը համոզելու ենք, – իմ կողմի վրա զգույշ շշնջաց Սևանը։

- Հա, – Դեմիրճյանը կրկին ուղղակի դարձավ ինձ, – էլ ուրիշ ինչն էր պատճառը, որ հայերեն գրերի գյուտը դարձել էր ստիպողական անհրաժեշտություն։

ՈՒրիշ պատճառ, ճիշտն ասած, չկարողացա մտաբերել։ Աչքերն ուղիղ ակնաբիբերիս մեխած, Դեմիրճյանը պատասխանի էր սպասում։

- Կրոնը ..., – զգույշ սկսեց Սևանը, բայց Դեմիրճյանը ընդհատեց նրան։

- Այո՛, կրոնը, մի վախենա, բարձր ասա, – կրկին աշխուժացավ նա, – հայկական տառերի ստեղծման կարևոր պատճառներից մեկն էլ կրոնն էր, այսինքն՝ մեր լեզվով ասած, նոր գաղափարախոսությունը։ Մեսրոպ Մաշտոցի ժամանակ հայերը հարյուր տարուց ավելի էր, որ քրիստոնեություն էին ընդունել։ Հին և նոր բոլոր ժամանակներում, երբ ազգը հաղորդակից է լինում նոր գաղափարախոսության, պետք է որ իր մայրենիով թարգմանի դրա ընտրանին, կամ գոնե հիմնական սկզբունքների կարգախոսիչը (ես մտքումս պահեցի «սկզբունքների կարգախոսիչ» ինքնատիպ արտահայտությունը), – Դեմիրճյանը մի պահ լռեց, – Քրիստոնեական իդեոլոգիան նույնպես ուներ իր կարգախոսիչը։ Դա ո՞րն էր, – կրկին շեշտակի դարձավ ինձ։

- Աստվածաշունչը, – գրեթե միաժամանակ վրա բերեցինք երկուսով։

- Այո՛, – Դեմիրճյանը բազմանշանակալից ժպտաց, – հասկանում եք, չէ՞, թե ինչպիսի բարդ իրավիճակ էր ստեղծվել։ Կար նոր գաղափարախոսությունը՝ քրիստոնեական կրոնը, բայց նրա սկզբունքների կարգախոսիչը, այսինքն՝ Աստվածաշունչը, հայերեն չէր կարելի թարգմանել ու մատուցել ժողովրդին, որովհետև հայոց լեզուն հնարավոր չէր գրի առնել։ ՈՒրեմն...

- ՈՒրեմն հարկավոր էր հայոց լեզվի համար տառեր ստեղծել, – եզրափակեց Հենրիկ Սևանը։

- Այո, լեզուն գրի առնել կարողանալու պահանջը արդեն դարձել էր հրամայական անհրաժեշտություն, դարձել էր մեր ժողովրդի՝ որպես ինքնուրույն միավոր գոյություն ունենալը վճռող առաջնահերթ մի գործոն, – Դեմիրճյանը լռեց, շունչ առավ, – երբեք և ոչ մի ժամանակ հայ ժողովրդի գլխին այդպիսի մեծ վտանգ կախված չի եղել, ինչպես այդ դարում։ Եվ դրա համար էլ ամբողջ հայ պետությունն էր իր մեծով ու փոքրով խառնվել իրար, գործը բոպե առաջ գլուխ բերելու համար։

Դեմիրճյանի խոսքերը, ճիշտն ասած, չափազանցություն թվացին ինձ։ Թվաց, թե Վարպետը հարցը սխալ է դնում։ Տառերի գյուտի հարցում «մեծով և փոքրով խառնվելու» դեպքում կնսեմանար Մաշտոցի կատարած գործի մեծությունը։ Ըստ երևույթին նկատելով իմ տարակուսանքը, նա հանդարտ ոտքի ելավ։

- Հիմա ես ... Խորենացիս բերեմ։

Նա վերադարձավ, կրծքին սեղմած Խորենացու «Հայոց պատմության»՝ Մալխասյանցի կատարած աշխարհաբար թարգմանությունը և նստելով նախկին տեղում՝ մեր դիմաց, լռելյայն սկսեց թերթել։

Մինչև այսօր չեմ կարողանում մոռանալ այդ հուզիչ, վեհաշուք տեսարանը։ Սեղանին Խորենացին էր, հազար հինգ հարյուր տարվա հնություն ունեցող մեր դասականը, որի գործը մնացել ու մնալու է անկրկնելի, իսկ սեղանի մոտ մեր մյուս դասականն էր՝ Դեմիրճյանը, որին նույնպես վիճակված էր քայլել դարերի միջով։ Նրանցից մեկը օգտվում էր մյուսից և միաժամանակ ավելի պարզաբանում, լրացնում ու

ավելի հստակում էր նրան, իսկ մյուսը՝ մեծ Խորենացին հազար հինգ հարյուր տարվա իր հեռավորությունից կարծես գալիս էր է՛լ ավելի պարզ ու բյուրեղացած երևալու մեզ։ Դեմիրճյանն իր անարյուն, ասես մոմե մատներով շարունակում էր թերթել Խորենացուն, իսկ ինձ անընդհատ թվում էր, որ դարերը հանդիպել են իրար և նվիրական գաղտնիքներ են փսփսում մեկը մյուսին...

- Տեսեք, թե ինչ է ասում Խորենացին, – Դեմիրճյանի ձայնը սթափեցրեց ինձ, – սա այն հատվածն է, որ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ կաթողիկոսը գնում են Վռամշապուհ թագավորի մոտ և նրան տեղեկացնում հայկական տառեր ստեղծելու իրենց մտահղացման մասին։ «Թագավորն ասաց, – սկսեց կարդալ Դեմիրճյանը, – որ իրեն արդեն հայտնի է, որ Միջագետքում, Դանիել եպիսկոպոս ասորու մոտ կան հայերեն տառեր...», – Դեմիրճյանն անսքող ոգևորությամբ ցուցամատը խփեց էջին, – տեսնում եք ինչ կարևոր վկայություն է։ ՈՒրեմն հայոց Վռամշապուհ թագավորին նույնպես անհանգստացրել էր տառեր չունենալու հանգամանքը և նա հարց ու պրպտուք էր արել անգամ մինչև Միջագետք և պարզել էր, որ Դանիել ասորու մոտ հայերեն տառեր կան։ Այսինքն՝ մինչև Մաշտոցին ու Սահակ կաթողիկոսին իր կաբինետում ընդունելը, – Դեմիրճյանն ուրախ ծիծաղեց այս վերջին բառերի վրա, – Վռամշապուհ թագավորն արդեն ահագին գործ էր արել։ Իսկ սա ապացուցում է, որ հայկական գրի ստեղծման հարցը մտահոգում էր բոլորին՝ սկսած թագավորից և վերջացրած ամենավերջին շինականով։

Խոստովանում եմ, չնայած հայ հին գրականությունից մենք լսել էինք պրոֆեսոր Մկրյանի հիանալի դասախոսությունները, չնայած ես ինքս էլ բավականին տեղյակ էի Մեսրոպ Մաշտոցի և հայերեն գրերի գյուտի պատմությանը, բայց Դեմիրճյանի մեկնաբանություններից հետո ամեն ինչ նոր լույսով պատկերացավ։ Դժվար չէր նկատել, որ Վարպետի ինքնատիպ և ստեղծագործական մոտեցումները մտածելու շատ նյութ էին տալիս։

- Մեսրոպ Մաշտոցն էլ իր մեծ գործին շատ հիմնավոր էր նախապատրաստվել, Վարպետ, – երկարատև լռությունը խզեց Հենրիկ Սևանը։

- Մեծ գործերը մեծ էլ նախապատրաստություն պետք է պահանջեին, – նորից խոսք առավ Դեմիրճյանը, – թեկուզ հենց այն փաստը, որ Մաշտոցը, մեր լեզվով ասած, գիտական գործուղման էր գնացել աշխարհի բոլոր նշանավոր կենտրոնները, դա արդեն մի մեծ վեպի նյութ է: Եդեսիա, Ամիդ, Երուսաղեմ...

- Երուսաղե՞մ, – վերջին անվանումից զարմացած, Դեմիրճյանին ոչ այնքան գեղեցիկ ընդհատեցի ես, – Վարպետ, Մաշտոցը Երուսաղեմում չի եղել:

- Իսկ ո՞վ ասաց, – թեթև հեգնանքով հարցրեց Դեմիրճյանը:

- Մաշտոցի կենսագիր Կորյունը մեկ առ մեկ հիշատակում է նրա ուղևորությունները, սակայն Երուսաղեմի մասին հիշատակություն չկա:

Ինձ պատասխանելու փոխարեն, Դեմիրճյանը կրկին վեր կացավ և իր ծերունական հանդարտ քայլվածքով կրկին անցավ հարևան սենյակը: Սպասում էի, որ կվերադառնա Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքով, որովհետև դա էր ինձ հայտնի միակ հավաստի աղբյուրը Մաշտոցի ու նրա գործի մասին, սակայն Վարպետը վերադարձավ ձեռքին սեղմած Մովսես Կաղանկատվացու հատորը:

- Սա Կաղանկատվացին է, – հանդարտ արտաբերեց նա, մի տեսակ հաղթականորեն նայելով մեզ, – հիմա տեսեք, թե պատմիչն ինչ է ասում, – Դեմիրճյանը բացելով նախապես էջանշան դրված մի էջ, սկսեց մատը տողերի տակից սահեցնելով կարդալ:

Թե Կաղանկատվացու որ հրատարակությունն էր այդ, ցավոք, չեմ կարող հիշել: Մտապահել եմ միայն էջը՝ 190: Այնտեղ ասվում էր, որ տառերի գյուտն անելուց հետո, իր աշակերտների հետ Մաշտոցը ուղևորվել էր Երուսաղեմ, ինչ-որ արարողություն կատարելու համար, ապա վերադառնալով Հայաստան, գնացել էր ՈՒտիք:

Դեմիրճյանի կարդացածը, խոստովանում եմ, ուժեղ տպավորություն գործեց ինձ վրա: Զարմացել էր Հենրիկ Սևանն էլ: Երուսաղեմ գնացած Մաշտոցի մասին ոչ միայն ոչինչ չգիտեինք, այլև դժվար չէր պատկերացնել, թե Կաղանկատվացու հաղորդածը ինչ գայթակղիչ մտքերի տեղիք էր տալիս:

- Մաշտոցի արած գործն այնքան մեծ է, մեզ մտքերից հանեց Դեմիրճյանը, – որ այն չէր կարող սահմանափակվել միայն Կորյունով։ Հետագայի մեր մեծ ու փոքր պատմիչների զգալի մասը էլի է անդրադարձել նրան ու մեկ էլ տեսար, մի կարևոր փաստ է հաղորդել, ինչպես սա է։ – նա ցուցամատով խփեց Կաղանկատվացու հատորին, – Դրա համար էլ ոստիկանական խստապահանջությամբ քրքրում եմ մեր ամբողջ հին ու նոր մատենագիտությունը։

- Իսկ եթե հենց այդ գյուտի մասին մի հաղորդում տաք՝ հրատարակենք, – հարցը դարձյալ հստակեցրեց Հենրիկ Սևանը, – իհարկե մեր թերթի բնույթից ելնելով...

- Ես ձեզ ուրիշ բան կտամ, – Դեմիրճյանը կտրուկ ընդհատեց Սևանին և արդեն երրորդ անգամ ոտքի ելավ, – մի պատրաստի հատված կա... տամ ձեզ։

- Լսի՛ր, ստանալուն պես հեռանում ենք, – Դեմիրճյանի գնալուց հետո շշուկով ինձ դարձավ Սևանը, – էլ հարցեր չտաս, հանկարծ տվածը հետ կվերցնի։

Հարևան սենյակից Դեմիրճյանը վերադարձավ ծավալուն մի թղթապանակ թևի տակ դրած։ Անշտապ նստեց, քանդեց թղթապանակի կապը, զգուշությամբ բացեց այն և ...

Եվ ես չկարողացա զսպել զարմանքի ճիչս։

Թղթապանակում կային աշակերտական տետրերի կազմեր, ծոցատետրի մեծ ու փոքր թերթեր, նոտաների՝ համապատասխան տողված թղթեր, բազմաթիվ ամենատարբեր մեծությունների թերթիկներ, կային հեռախոսի աբոնենտային գրքույկի էջեր, քաղաքային կոմունալ բաժնի բլանկներ, թղթերի կտորներ էլ կային, որոնք այնքան փոքր էին, որ Վարպետը դրանց վրա հազիվ երեք տող էր գրել։ Բոլոր այդ թղթերի մաքուր հատվածների վրա Դեմիրճյանը գրել էր։ Սրանցից յուրաքանչյուրը կլոր շրջանակի մեջ վերցված համար ուներ և այդ ահագին թղթակույտը դասավորված էր ըստ համարային հերթականության։ Մեծ ու փոքր թղթերի այդ տարօրինակ քաոսն այնքան անպասելի էր, որ ես զարմացած նայեցի Հենրիկ Սևանին։

- Վարպետը աշխատանքի ինքնատիպ ոճ ունի, – ասես պատասխանելով ինձ, խոսեց Հենրիկ Սևանը, – ամբողջ «Վարդանանքն» էլ է այսպիսի պատառիկների վրա գրվել։

- Ես ձեզ կարող եմ լավ թուղթ բերել, Վարպետ։

Ասածս Դեմիրճյանին դուր չեկավ։ Նա խիստ հայացքով նայեց ինձ և կտրուկ նետեց.

- Ես թղթի կարիք չունեմ։

Թղթապանակում եղած բազում թղթերի տակից նա հանեց մեքենագրված մի քանի էջեր, կրկին նույն անշտապ եղանակով կապեց թղթապանակը, իսկ մեքենագրված էջերը մեկնեց Հենրիկ Սևանին։

- Վերցրու, Հենրիկ։

Պատրաստվում էինք դուրս գալ տնից, երբ Դեմիրճյանը կանգնեցրեց մեզ։

-Երևի նկարագարդումներ էլ պիտի անեք, չէ՞։ Իսկ դա ո՞վ է անելու։

Իրար ընդհատելով՝ սկսեցինք ներկայացնել ու դրվատել թերթի նկարիչ Միհրան Սոսոյանին։ Դեմիրճյանն ուշադիր լսում էր։

- Տեսեք, հա, հանկարծ պիոներական փողկապով չնկարի Վարդան Մամիկոնյանին, – կատակեց նա։

ՈՒրախ-զվարթ վերադարձանք խմբագրություն և անհապաղ պլանավորեցինք բերած նյութը։ «Մեսրոպ Մաշտոց» վեպի այդ հատվածը լույս տեսավ «Պիոներ կանչի» 1956 թվականի հուլիսի երկու համարներում։

Գրական թերթ, 1967, № 33, օգոստոսի 11